

# ԱՅՅ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(Հայ տուրիստի յիշողութիւններից)

ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

IV.

ՏԱՄՆՈՒԹ ՕՐ ԿԱՐԻՆՈՒՄ

...Բնակեալ ի կեռնես իւրեանց  
էքքեւ ի թանձբամած լաւազի  
և ողէքն արդեկեալք ի մորմնէ  
էքքեւ զկենդանի ի գերեղմանի...

ԵՎԼԻՇԵ,

(Շաբունակութիւն <sup>1)</sup>)

Հետևեալ օրը Սանսասրեան վարժարանից ուղարկւած էր կօշ-  
կակար էֆէնդին՝ «Մի կերպիւ» ինձ հասկացնելու, որ այլ ևս չ'այցե-  
լեմ այդ ուսումնարանը... Աւելորդ աշխատանք. արդէն ես ինքս  
այդպէս էի վճռել:

Տեսնելով որ բօլիս-էֆէնդիների աներեսութեան ոչ վերջ կայ և  
ոչ սահման և իմ անցաթուղթս, չը նայած իրանց խոստումներին և  
իմ պահանջներին, չեն վերադարձնում՝ ես անձամբ գնացի ռուսաց  
հիւպատոսարանը և բացատրեցի, թէ ինչո՞ւ այդպէս ուշ եմ կատա-  
րում պարտականութիւնս: Հիւպատոսարանի կողքին տաճկական  
պահականոցն է, որի մօտով անցնելիս՝ ինձ նկատեց Ալի էֆէնդին և  
երբ ես մոտայ հիւպատոսարանը, նա երկի հասկացաւ բանը ին-  
չումն է:

1) ՏԵ՛՛ «Մուզեա-է 4, 5, 7 և 9 համարները».

Նս արդէն վերադարձել էի և նստել ընթերցարանում, երբ յանկարծ դուռը բացւեց և ներս մտաւ թրի աղմկալի շառաշիւնով մի երկարահասակ տաճիկ պաշտօնեայ՝ «բաշ-բօլիսը», որին հետեւում էր՝ խորամանկ ժամկիտը հաստ կարմիր թշերին՝ իմ բարեկամ Ալին Բաշ-բօլիսը խրոխտ և կասկածուս հայեացք ձգելով վրաս, անցաւ առաջից և նստեց մի քանի քայլ ինձնից հեռու։ Բոլոր ներկայ գրտնըւողները յարգանքով ողջունեցին նորան։ Յովհաննէս աղան իսկոյն վազեց նորա մօտ, պատկառանքով սկսեց լսել բաշ-բօլիսի խօսքերը։ Խօսակցութիւնը իմ մասին էր. բաշ-բօլիսը պատկիրումէր, որ այսուհետեւ էլ նոր եկած հիւրերի գալ—գնալու մասին միշտ իմաց տայ Յովհաննէս աղան պօլիցիային. գովեց նորա ճշդութիւնը և յայտնեց իւր յոցը, որ այսուհետեւ էլ նոյն կերպ կը վարւի։ Այդ խօսակցութեան ժամանակ՝ Ալի էֆէնդին խորհրդաւոր ժպիտը երեսին մօտեցաւ ինձ և յանձնեց անցաթուղթս։

Երբ ես գնացի ռուսաց հիւպատոսարանը, ինձ յայտնեցին, որ Տաճկաստանում ճանապարհորդելու համար պէտք է և տաճկաց տեղական վարչութիւնից թուղթ ստանամ։ Բայց ես դեռ շատ քիչ բան էի տեսել Երզրումում։ և այն պայմանները, որ ստեղծել էին ինձ համար Սանասարեանները և պօլիցիան, աւելի դժւարացրել էին իմ գործը. ամենքը խորշումէին, փախչում ինձնից, իրեւ «միւզիրուից» (արդելած կառավարութիւնից)։ Գոնէ աղջային դպրոցներն էլ է տեսնեմ, մտածեցի ես. և խրատւած փորձից՝ վճռեցի նախ և առաջ ներկայանալ ս. առաջնորդին և թուղթուութիւն խնդրել։

Երեկոյեան ընթերցարանում ինձ ցոյց տւեցին առաջնորդարանի ծառայողներից մէկին։ Ես տեղեկացայ նորանից թէ ե՞րբ է սըրբազանը ընդունում և խնդրեցի նախապէս իմացնել նորան, թէ վազը կը գամ ալցելու թեան։

Միւս օր առաւտեան վերջացնելով թէյախմութիւնս՝ ի հարկէ, ցերքերներիս ներկայութեամբ՝ իջայ որ գնամ առաջնորդարանը։ Մուրադ էֆէնդին հետեւեց ինձ և երբ սանդուղքների պյախին ես կանգնեցի որ նա առաջ ընկնի, բօլիսը նոյնպէս կանգնեց և ասաց.

—Ուր էք գնում, էֆէնդի, ես ձեզ ճանապարհ կը դցեմ։

—Ենորհակալ եմ. նեղութիւն մի՛ քաշէք, ես ճանապարհը դէ-

պի առաջնորդարանը ճանաչում եմ. ասացի ես և դուրս եկայ հիւրանոցից: Այն ժամանակ Մուրագը սկսեց հետեւել ինձ, պատկառելի հեռաւորութիւն պահպանելով, և հասցրեց այդպէս ուղղակի մինչև առաջնորդարանի դուռը: Նա և Ալին պահում էին օրագիր (ժուրնալ) իմ բոլոր արածներիս:

Բարձրանալով աղօտ լուսաւորւած սանդուղքների զլուկը, ես տեսայ մի քանի դռներ, բաց ոչ մի մարդ: Աջ դրան յետեւից լըստում էին ձայներ, ես բացի և տեսայ մի սենեակում դեղին կոճակներով մի քանի ֆէսաւոր մարդիկ, որոնք աղմկալի ձայնով տաճկերէն էին խօսում: Այդ ծառաներից մինը գնաց և յայտնեց առաջնորդին իմ մասին ու վերագառնալով, ներս հրաւիրեց նորա սենեակը:

Մեծ լուսաւոր սենեակի մի ծայրում երկաթէ սօբան էր, իսկ հակառակ՝ գրասեղանը. պատերի բոլոր երկարութեամբ թախտ էր, մութաքաններով ծածկած: Գրասեղանի մօտ տնկւած էր մի երկարավիզ երիտասարդ. նորա դէմ ու դէմ՝ թախտի վերաց, պատուհանի մօտ նստած էր առաջնորդը—Արիստակէս եպիսկոպոս Դերձակեանը: Դա մի երկարահասակ նիհար ծերունի էր՝ զլիսին դրած Տաճկաստանի հայ հոգեւորականների սիրած շատաւիղանման ծալքերով, տափակ, կոնաձե դիմարկը և հագած մորթիի աստառով հին վերարկուն: Սրբազնը գուլպաներով ծալապատիկ այնպէս էր նստած, որ մի ծունկը ծառայում էր նորան իբրև գրասեղան:

Իմ ողջոնս ընդունելով նա, առանց փոխելու իւր յարմար դիրքը, խնդրեց նստել իւր մօտ և պատերեց յոցն ծառապին դայֆէ: Նա մի քանի րոպէ ևս պարապեց որպէս զի գործը վերջացնի, այսինքն՝ իւր ծնկի վերաց դարսած պաշտօնական թղթերը մի մի ձեռք քաշի և տայ գրասեղանի մօտ կանգնած երիտասարդին՝ ազգային վարչութեան քարտուղարին:

—Մեր կառավարութիւնից թուղթունի՞ք աս կողմերս ճանապարհորդելու, դիմեց ինձ սրբազնը արձակելով քարտուղարին:

—Ո՛չ, ես ունիմ ուսւաց անցաթուղթ, որը տեսել են և կնքել նախ՝ Ղարսի տաճկական հիւպատոսը և յետոյ՝ Զվինի մաքսատունը. Կարին հասնելուց էլ տեսել է այստեղի պոլիցիան:

Կարեսոր է մեր կառավարութենէն ալ թուղթ վերցնել. հետիկ աստեղ կը պահանջեն: Ո՞րտեղից ձեր հրամանքը կուգաք:

— Երևան—Եջմիածին—Ղարսից:

— Ի՞նչպէս է Վեհափառը, ի՞նչպիսի դրութեան մէջ է Մայր-Աթոռը:

— Վեհափառը Թիֆլիս է գնացել Կայսեր ներկայանալու: Եջմիածնում ոչինչ նորութիւն չը կաց:

Արիստակէս եպիսկոպոս Դերձակեանը պատկանում է իւր ուղղութեամբ Յարութիւն պատրիարքի խմբին. մոլեռանդ թրքասէր և Հակա-Ներսիսական ու հին աշխարհայցեցողութեան արեղաներ, որոնց մոտաւոր մնունդը ժամագիրքն է տւել, իսկ դաստիարակութեան միջօցը՝ ծառացի կամ փոքրաւորի պաշտօնն է եղել մի որ և է վանականի մօտ:

Իւր կոյր թրքամոլութեամբ և մի քանի սովորականս յատկութիւնների համար՝ նա անժողովրդական մի անձնաւորութիւն է և զարմանալի է, որ Կարնոց առաջնորդական աթոռի պէս մի կարեսոր պաշտօն նորան է յանձնաւած: Կարինը, գտնւելով Թիւրքիայի համարեա միակ փոքր իշատէ կարգին խճուղու վերաց, այնքան անջատւած չի լոյս աշխարհից, ինչպէս Վանը, Մուշը, Բաղէշը. ուստի գործելու աւելի յարմարութիւններ ունի: Կարնոց առաջնորդութեան ենթակայ են 5 վիճակներ—Կեղի, Բասեան, Դերջան, Խընուս և Սպեր. ամենն էլ անխնամ, թափուր, անկարգ վիճակի մէջ. վանքերը քանդաւած ու կողոպտւած, եկեղեցիները անշուք և տգէտ քահանաներով լիքը. զիւղերը գուրկ ուսումնարաններից. ժողովուրդը լքեալ, վհատած, անպաշտպան:

Ժողովրդի սիրտը վշտացած էր նա մանաւանդ վերջերումն պատահած մի քանի դէպքերի առթիւ. մի քանի հայ աղջիկներ, 14—15 տարեկան, բռնի կերպով իսլամութիւն են ընդունում: Դոցանից մինը որ բերւած է լինում Կարին, փախչում է տաճիկների մօտից առաջնորդարանը, առաջնորդի ոտքերն ընկնում, աղաչում, պաղասում՝ ազատել դիրան, առաջնորդի ոտքերն ընկնում, աղաչում, պաղասում՝ ազատել դիրան անօրէնների ճիրաններից: — «Կտոր կտոր արէք ինձ, բայց մի՛ յանձիրան անօրէնների ճիրաններից: — Կտոր արէք ինձ, բայց մի՛ յանձնէք տաճիկներին, աղերսում է խեղճ աղջիկը. բայց առաջնորդը կրկին կառավարութեան է յանձնում աղջկան, չուզենալով իրան մասին եղած կառավարութեան վստահութիւնը նսեմացնել, չընացելով, որ նոյն իսկ տաճկական օրէն քով անչափահասը չի կարող հաւատափափութեան դիմել:

Ել չեմ ասում մի քանի անմեղ տեղը բանտարկւած հոգևորականներին ազատելու մասին։ Մի քահանայ, Պօլիս վերադառնալիս, խուզարկուում է և մօտը գտնուում Մայր-Արաքսի երդը տպագրւած։ բանտարկւում, հարցաքննուում է քահանան և շաւիտենական աքսորո ուղարկուում։ Յերթև գիւղի ծեր քահանայի մօտ իջևանուում է մի ուուսահպատակ հայ։ Այդ գիւղի թիւրք աղաներից մէկը, որ անձնական թշնամութիւն է ունենուում քահանայի հետ, գնում է ամբաստանում կառավարութեան առաջ ծերունուն, ասելով՝ թէ քահանայի մօտ այդ ուուսահպատակը ժողովել էր իւր շուրջը գիւղացիներից մօտ 40 հոգի իրանց ծեր քահանայի հետ բերուում են կարին և լքցընուում բանտը։ Մի քանի ամիս տեւում է նրանց չարչարանքը։ քահանան մերձամահ հիւանդանում է այցուեղ և երբ գիւղ են հայնում, մեռնում է։ Այս և նման դէպքերում դեռ գուցէ մի քանիսները արդարացնեն առաջնորդի անտարբերութիւնը, բայց հազիւ նոյնը կ'ասեն վերև բերած օրինակում, ուր խնդիրը մինչև անգամ կրօնական է։

Թոյլտութիւն սուանալով այցելել ազգային դպրոցները, ես հեռացայ սրբազանի մօտից։ Նախասենեակում ինձ շրջապատեցին ծառաները, որոնք վիճում էին իրար հետ մի հարցի մասին։

—Ահա՛ էֆէնդին կ'ասի, զիմեց տաճկերէն նրանցից մէկը ինձ։ Ես ասում եմ, որ հայոց կաթուղիկուը գնացել է տեսնելու մեր սուլթանի հետ Ստամբոլ, իսկ ահա սա վիճում է ինձ հետ, թէ Թիֆլիս է գնացել ուուսաց թագաւորին տեսնելու...»

Յոյն ծառան լսել էր մեր խօսակցութիւնը և պատմել միւաներին, բայց խեղճերի գլխում քաղաքական—աշխարհագրական տեղեկութիւնները շատ մութն էին...»

Սանդուղքների գլխին ինձ սպասում էր սիրալիր ժպիտը երեսին քարտուղար էֆ., որը յայտնեց իւր «բերկանքը», որ պատիւ ունի ծանօթանալինձ «պէս...» հետ և այն, և այն. մի խօսքով՝ այնքան սիրալիրութիւն ցոյց տւեց խօսքերով, որ ես դեռ կարինում ոչ ոքից չէի տեսել. տեղը յարմար էր և...թաքուն... Իսկ յետոյ միւնոյն պարոնը, ինձ տեսնելիս, երեսը շուռ էր տալիս և ցոյց տալիս իրան բոլորովին անձանօթ։

Առաջնորդարանից, մի առանձին մուտքով, առանց կրկին դուրս գալու փողոցը, ուղղակի մուայ բակը, ուր Կարինի մայր վարժարանն էր։ Վարժարանի մուտքին շարւած էին աշակերտների կօշիկները և հողաթափները։ Լայն բացւած դռուր ուղղակի բակից տանում էր վարժարանի բաւական մեծ նախասենեակը, որից զանազան դռներ էին շինած դէպի առանձին դասատուները։ Դրան մօտ կանգնած «անտեսը» (ծառան) իմաց տեղ տեսչին, որը ընդունեց ինձ և տարաւ ուսուցչանոց։ Պ. տեսուչը ծանօթացրեց սենեակում գտնող վարժապետների հետ։ Այնքան խեղճ, ողորմելի էին ացդ ձեռները ծալած, հրովարեան կնիքը երեսներին և աղքատ հաղնւած մարդիկ, որ մարդ դժւարանում էր հաւատալ, թէ դրքա վարժապետներ են։

Կարնոյ ազգային մայր վարժարանի ուսուցչական խումբը բաղ- կացած էր 12 մարդկանցից։ Տեսուչը՝ պ. Եղիշէ Դուրսունեան, որ Վենետիկի Միսիթարեանների մօտ էր ուսած և ս. Մ. եպ. Օրմանեանի հետ միասին Հայաստանեաց եկեղեցու գիրկը վերադարձած ու կրկին աշխարհական դարձած, մի համակրելի անձնաւորութիւն էր։ բացի տեսութիւնից, նա դասատու էր ֆրանսերէն լեզուի և ընդհանուր պատմութեան։ Պ. տեսուչը ստանումէ ամենամեծ ռոճիկը, այսինքն՝ 500 զուրուշ ամսական (մօտ 45 րուբի)։ բացի տեսչից և մանկավարժ պ. Վ. Փ.-ից, որ դուրս է եկել էջմիածնի ձեմարանի 4-րդ դասարանից և համարում է, և իրաւացի, Կարնոյ ազգային վարժարանի ամենալաւ ուսուցիչը՝ Ֆնացեալ բոլորը աւարտել են իրանց ուսումը կամ նոյն ուսումնարանում կամ Մշոյ ս. Կարապետի վանքում։ Ուսուցիչների ռոճիկը 50 զուրուշ ամսականից (4 ր. 50 կ.) հասնում է 450 զուրուշ (36 րուբի)։ բայց այդ պատկառելիս գումարը միայն ստանում է արժանաւորագոյնը «Ուսումնական Խորհրդի» (Համեմատի՛ր մեր «Հոգաբարձութեան» հետ) աչքում։ Այդ բաղկը ունի հայկաբան Պ. պատմելին, որ իւր ուսումը աւարտել է ս. Կարապետի վանքում և իւր հլու, համբ ու բարեպաշտ բարքով ու խոնարհ գլուխ տալով խորհրդականներին, համարւումէ նրանց աչքում վարժապետի մի կատարելատիպ. իսկ ընդհանրապէս՝ ամսական 50, 100, 120, 150 զուրուշն է համարւում վարժապետի վարձը։ Որքան և սակաւ լինի Թիւրքիայում փողը և արժան ապրուսող, այնու ամենայնիւ։ 5 կամ 10, 16 րուբիով անհնարին է ապրել և ընտանիք պահել, այն էլ Կա-

րինում, ուր համարեա կէս տարի սասաթիկ ձմեռ է լինում, և զառելիքը թանգ: Ել ո՞ր միջոց ունեցող մարդը 5—10 րուբլիով ուսուցչութիւն կ'անի: Եւ ճարահատեալ այդ խեղճերը, իրանց ընտանիքը պահելու համար, ապրում են սաստիկ զրկանքներ կրելով, իսկ նրանց կանաչը լւացարարութեամբ են աշխատում մի քանի դորոշ ևս, որպէս զի մի կերպ քաղցածութիւնից և ցրախց ազատեն իրանց մանուկներին:

Կարնոյ ազգային մայր վարժարանը ունի հետեւեալ բազմազան բաժանմունքները. մանկանոց, ծաղկոց, առաջին, երկրորդ և երրորդ ընտելարան, առաջին և երկրորդ նախակրթարան և մի կրթարան: Վեց տարեկանից ընդունում է երեխան և պատանեկան հասակում աւարտում: Նրանք սովորում են կրօն, հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, թւարանութիւն, հայրենագիտութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն և ընդհանուր պատմութիւն. իսկ թէ ի՞նչպէս են անցնում՝ այդ մասին մեծ պահանջներ չի կարելի անել ի նկատի առնելով, թէ ուսուցիչների պատրաստութիւնը և թէ կարգին դասագրքերի և նպաստների բացակայութիւնը. միակ դասագիրքը պ. Տէր-Նեսնդեանի «Մայրենի և զունաէ տաճկահայոց բարբառի վերածած»: Սանաարեանք ոչինչ օգնութիւն չեն հասցնում այդ ուսումնարանին ոչ խորհրդով, ոչ գործով:

Աշակերտներից ամենահարուստները տալիս են մի ոսկի տարեկան: Մայր վարժարանում սովորող աշակերտների թիւը 425 էր. համարեա բոլորը արհեստաւորների և աղքատ ծնողների զաւակներ: Բաւականին լոյս, ընդարձակ դասասուններում, կանոնաւոր նստարանների վերաց նստած էին աշակերտներ, որոնցից շատերը ցնցուտիներով էին ծածկւած, իսկ ընդհանրապէս բոլորն էլ առանց կօշիկների և միմիան գուլպաներով: Յատակի մաքրութիւնը երեխաների առողջութիւնից վեր դասելով, Ուսումնական Խորհրդի ազգասէր էֆէնդիները կարգադրել էին (նրանք ուսումնարանական ամեն գործի մէջ խառնում են), որ աշակերտները իրանց կօշիկները հանեն ուսումնարանի դրան շէմին:

Նոյն գաւթում, առաջնորդարանի տակ գտնւած սենեակներում՝ եթէ կարելի է այդ խօնաւ, ցուրտ, մութ, կեղտոտ և փոքրիկ նկուզներին այդպիսի անուն տալ՝ գտնւում են նաև մօտ 200 խեղճ մանուկներ՝ մի քանի ողորմելի վարժապեաների հսկողութեան տակ:

Տեղ չը լինելու պատճառով, արել են այդ երեխաներին այդ հորժատութեանները և ոչ դասատունները, իսկ ազգային շինութիւնը Սանասարեան վարժարանի մի մասն է այժմ կազմում:

Թաղային խորհուրդը ուզում է եղել յետ առնել Սանասարեան տեաչութիւնից իւր ացդ շինութիւնը, բայց մի քանի ազդեցիկ ազգայիններ, որոնց որդիք Սանասարեան վարժարանում են ուսանում, գործին ուրիշ ձեւ տեին: Այն ժամանակ Մարեան Գէորդ անունով մի վաճառական յայտնեց առաջնորդին իւր պատրաստականութիւնը՝ կառուցանել մի թաղական վարժարան իւր ծախքով: Պէտք էր ոգրաւոր զիկել իւր փափագը՝ ազգային քաղաքական ժողովին, որը կը կարդաց բարերարի նպատակը և կը սկսի խորախորհուրդ կերպով մտածել, թէ ո՞ւր պէտք է բանալ թաղային վարժարանը և, երկար չը կարողանալով այդ ծանր խնդիրը լուծել, մոռացութեան կը տայ նորան: Գէորդ աղա Մարեանը կրկին դիմում է ժողովին և խնդրում, որքան կարելի է շուտ տալ իրանց որոշումը, որպէս զի քանի ողջ է դպրոցի բացւիլն տեսնէ. (բարերարը ծեր և հիւանդ մարդ է): Վերջապէս յաջորդում է բարերարին գնել ուսումնարանի համար մի տուն 600 ոսկով, ուր պիտի տեղափոխէին այդ նկուղների մէջ թափւած երեխաները:

Կարինում կաց և մի մասնաւոր մարդու դպրոց, որ կուսակցական ոգու ծնունդ է, և Ազարեան թաղային վարժարանը. բայց դրանց անձամբ չը տեսայ: Առաջինը մօտ 150 աշակերտ ունի, իսկ երկրորդը 120: Այս թաղական վարժարանից աւարտածները մտնում են մայր վարժարանի երրորդ՝ ընտելարանը:

Ազգային աղջկանց վարժարանների հետ էլ յանկանալով ծանօթանալ, ես խնդրեցի մի պարոնից, որ ինձ ցոյց տայ ճանապարհը Մեծ դժւարութեամբ նա համաձայնեց. այն էլ ուղիղ ճանապարհով վախենալով ինձ տանել, ընտրեց ծուռ ու մուռ, խուլ փողոցներ, որպէս զի չը նկատեն թէ ինքը ինձ հետ ման է դալիս:

Աղջկերանց վարժարանը մի երկարկանի քարեայ հասարակ շինութիւն է, ընդարձակ սենեակներով: Բարձրանալով երկրորդ չարկը, ուղղակի մտանք դահլիճը, որի տախտակամած յատակին նստած էին գուլպաներով մի խումբ աղջիկներ մի վարժուհու հսկողութեան տակ, և ձեռագործութեամբ էին պարապում: տեղ չը կար դասատնում

զրանց համար: Իմ առաջնորդս ինձ տարաւ ուսումնարանի տեսլի մօտ, որին կոչում էին պատւելի: Դա մի երկարահասակ ծեր մարդ էր՝ ծուած մէջքով և ծանր լսողութեամբ: Հագին ունէր սև երկար խալաթ: Նա նստած էր սեղանի մօտ մի ուրիշ նիհար և աւելի ջահէլ մարդու հետ միասին, որ նոյնպէս երկայն բաց դոյնզդոյն խալաթ էր հագած, մէջքին հաստ գօտի կապած, զլիսին դրած ֆէս՝ շուրջը ահագին փաթթոց և սուր քթին՝ ակնոյներ: Առաջի պատւելին հայերէնի, իսկ երկրորդը՝ կրօնի ուսուցիչներն էին:

Վարժուհիք նոյն ուսումնարանում են աւարտած իրանց ուսումը. ողորմելի՛ պատրաստութիւն: Գրել, կարգալ, թւել և ձեռագործ.—ահա՛ ինչ են սովորում աշակերտուհիները, որոնց թիւը մօտ 400 էր:

Կարինի ազգային վարժարանները համեմատած Թիւրքաց-Հայաստանի ուրիշ աղդային վարժարանների հետ, դեռ փառք են: Միացեալ Ընկերութեան դպրոցներն էլ գեղեցիկ բացառութիւն չեն կազմում, և զարմանալու էլ չէ. աղօսեցիք նոյն իսկ իրանց համար կարգին վարժապետներ չ'ունին, Հայաստան ուղարկածները ի՞նչ կը լինին: Ամբողջ Թիւրքիայում հայերը չ'ունին մի վարժապետանոց. ուշրութեան ուսումնարաններն էլ դեռ իրանք կարօտութիւն ունին կարգ ու կանոնի, և դեռ. Հայոց ուսումնարանները նրանց համար իրեւ օրինակ կարող են ծառայել. ուրիշն ո՞րտեղից սպասել, որ Թիւրքաց-Հայաստանի թշւառ ուսումնարաններում ուրիշ վարժուհիք կամ ուսուցիչներ լինին, բայց եղածներից: Յոյս կարելի էր ունենալ կամ Սանասարեան վարժարանի վերաց կամ Ցրապիզնի ազգային ուսումնարանի. առաջինը միջոց ունի և մարդիկ, բայց ինչ որ պակասում է... իսկ երկրորդը միջոց չ'ունի, բայց կարող էր վարժապետանոցի գաղափարը իրագործել՝ մօտիկ լինելով ուսուահայերին, որոնք և՛ ուսումնարանական գործում թիւրքահայերի համար կատարեալ եւրոպացիք են: Եթէ Թիւրքաց-Հայաստանի ուսումնարաններում վերջին ժամանակներ նկատումէ փոփոխութիւն արտաքինում և փոքր ի շատէ թարմութիւն ու կանոնաւորութիւն դասաւանդութեան մէջ — այդ համարեա բացառապէս պէտք է վերագրել ուսուահայոց դպրոցներից ընկած ճառագայթներին: Թիւրքաց-Հայաստանում ուսուահայոց դպրոցներից կիսաւարտը աւելի յարդանք ունի, քան Պօլսից եկած քազ-

մաշմուտ ալավրանկաները։ Քանի որ ներկայ պայմաններում ոչ Պօլսում, ոչ Տրապիզոնում և ոչ Երզրումում վարժապետանոց կայ, պէտք էր աշխատել Եջմիածնի ճեմարանում և Ներսիսեան դպրանցում Թիւրքաց-Հայաստանի զանազան կողմերից բազմաթիւ որդեգիրներ ընդունել։ Անհիմն է, թէ այդ ուսումնաւարտները չէին վերադառնալ հայրենիք։

\* \* \*

Մի երկու օրից յետոյ ես այցելեցի և ամերիկացի միսիօնարների դպրոցը բողոքական հայերի համար։

Հայ-բողոքականների դպրոցը, ժողովարանը և միսիօնարների բնակարանը գտնւում են Կարինի ամենամեծ փողոցի վերայ, ուր և զանազան հիւպատոսարաններն են զետեղւած։

Փոքրիկ ժողովարանին կից շինւածէ մի մեծ, երկարկանի, փառաւնեղ՝ Կարինի համար ի հարկէ քարեայ շինութիւն, որի ներքին յարկում գտնւում է Երզրումի միակ գրավաճառանոցը, ուր բացի միսիօնարների հրատարակած աստուածաշնչերից, աւետարաններից և դասագրքերից աւելի ոչինչ չը կայ։ Նոյն յարկում է զետեղւած և մի բողոքական հայ հիւմնի արհեստանոցը։

Գեղեցիկ մեծ դաները ուղղակի փողոցից տանում են այդ շինութեան ներսը, ուր երկու սենեակում ուսումնարանն է զետեղւած։

Ներքեւի յարկի մի մեծ, լուսաւոր, սպիտակ պատերով և մաքուր տախտակամածով սենեակում մանկական պարտէզն էր։ Սենեակի ճակատին մեծ տառերով գրւած էր մի ինչ որ նախադասութիւն աւետարանից, իսկ մէջտեղում ու տառի ձեռվ նեղ երկայն սեղան էր, որի շուրջը նատած էին երկու սեռի փոքրիկ, 4—7 տարեկան, մանուկներ, որոնց հետ պարապում էր պարզ մաքուր հազնւած մի հայ օրիորդ, որ ինձ ընդունեց և խնդրեց նստել։ Այդ ո-աձեւ սեղանի սկզբում դրւած էր մի փոքրիկ դաշնամուր, որի առջև՝ ուրեմն այդպիսով ստացւած քառանկիւնի մէջ՝ նատած էր ինքը վարժուհին՝ անգլիական մի նոր մանկավարժական գիրք ձեռքումը բռնած և բարձր ձայնով հայերէն զանազան վարժութիւններ անում մանուկների հետ։ Այդ սեղանից աջ դրւած էր մի աւելի փոքր սեղան, որի շուրջը,

առանձին, նստել էին շատ փոքրիկները՝ 3—4 տարեկան երեխաներ՝ և մի մեծ աղջկաց հսկողութեան տակ լուս խաղում էին. իրանց առջև դրած մանր զնդակները շարում էին թելի վերաց և օղակներից զանազան ձևեր շինում և այլն:

Վարժուհին պարապում էր աւելի մեծերի՝ 4—7 տարեկան մանուկների հետ: ո-աձև սեղանի երեսը բաժանաւած էր շախմատի տախտակի նման քառանկիւների: Վարժուհին պատկրեց երեխաներից մէկին մօտենալ իրան և վերցնել իրանից արկղիկները ու բաժանել երեխաներին: Երեխան կատարեց այդ բոլորը մեծ կարգապահութեամբ: Մանուկներից իւրաքանչիւրը դրեց իւր առջեւ ստացած արկղիկը և սպասում էր վարժուհու հրամանին: Երբ բոլորին բաժանելով փոքրիկ աղջիկը նստեց իւր տեղումը, վարժուհին պատվիրեց բանալ և շուռ տալ արկղիկը: Երեխաները կատարեցին բոլորը միաժամանակ և իւրաքանչիւրի առջեւ դարսւեցին զանազան մեծութեան տախտակեայ աղիւաներ: Վարժուհու հրամանին լսելով թէ այս ինչ գծի վերաց դրեցէք մի աղիւա, նորանից աջ, նորանից ձախ, վրան և այլն՝ երեխաները շինեցին մի ծիսնելոյզ: Երբ վերջացը ինչ է. և բոլորը միասին պատասխանեցին՝ ճշխնելոյզ: Յետոյ հրամացեց կարգով դարսել և կարգով դնել արկղիկի մէջ ու կողակել, և կրկին բաժանողը հաւաքեց արկղիկները: Այս բոլորը կատարում էր մեծ դիսցիլինացով: Վարժուհին նոյն աղջկաց միջոցով բաժանեց երեխաներին պողպատեայ մեծ և փոքր օղակներ, որոնցից կրկին վարժուհու հրամանի համեմատ իւրաքանչիւր երեխան դնելով այս կամ այն գծի վերաց մեծ կամ փոքր օղակը՝ զանազան ձևեր էր ստանում: Այդ վարժութիւնները ընտելացնում էին երեխաներին կարգ ու կանոնի, աջ, ձախ, վերև, ներքև որոշելու և սկզբնական թւերին: Երեխաները հաճութեամբ էին ամենը կատարում:

Երբ այդ էլ վերջացաւ, վարժուհին նոյն ձևով մանուկներին բաժանեց բրդեաց դրյնզգոյն գնդակներ: Երեխաները հետեւելով վարժուհուն, որը նոյնպէս ձեռքին ուներ մի գնդակ կարճ թելից կախած, սկսեցին ճօմելով գնդակը ներդաշնակ երգել, նաև հայերէն, յետոյ անգլիերէն, մի պարզ երգ գնդակի մասին, որի մէջ երգող բովանդակութիւնը և' տեսնում էին և' կատարում իրանք:

Ժողովելով գնդակները, վարժուհին կրկին նստեց իւր տեղում, առաւ ձեռքը համբիչը և սկսեց մի մի ձղել, իսկ երեխաները բոլորը միասին թւել 1, 2, 3, 4 մինչև 100, նախ հայերէն, յետոյ անգլիերէն ու տաճկերէն:

Այդ սիրուն, մաքուր, զւարթ երեխաներից միայն 7 էին բողոքական հայ ծնողների զաւակներ, միւսները՝ 30 հոգի՝ հայ-լուսաւորչականների որդիք էին:

Առհասարակ այդ մանկական պարտէզը լաւ տպաւորութիւն արեց. միայն անախորժ էր մանուկների մէջ արդէն ցանւող անգլիամոլութիւնը և սէրը դէպի Հիւսիսային Ամերիկան, որի քարտէզը բողոքականների դպրոցում ամեն մի դասատան մէջ անհրաժեշտութիւն է, ինչպէս և աւետարանից բերած մի որ և է նախադասութիւն պատի վերաց հիւս. Ամերիկան հայրենիք է համարւում հայ բողոքականների համար: Գոնէ այսպէս են ցանկանում միսիօնարները:

Բարձրանալով երկրորդ յարկը, մեծ շքեղ սենեակներից միայն մէկում տեսայ դասատուն. միւսները լիքն էին խոսով և իրար վերաց թափւած կահ կարասիքով: Ուսուցիչը մի ֆիսաւոր երիտասարդ բողոքական հայ էր անգլիացու արտաքին ձևերով: Դասատան մէջ նրատած էին 28 հայ-բողոքական աշակերտներ՝ սկսած թ տարեկանից մինչև 18 տարեկան հասակը: Առաջի կարգի նստարանների վերաց նստած էին մեծերը, որոնցից չորսը կանգնել էին պատից կախ երկու գրատախտակների մօտ և չորսն էլ մի և նոյն ալգերական խնդիրն էին լուծում, լատիներէն նշանագրերի տեղ հայերէնը գործածելով: Ցետեսի կարգում նստած փոքր աշակերտները պատկանելով ուրիշ բաժանմունքին, իրանց գործով էին զբաղւած կամ անգործ էին: Այդ ուսուցիչը և մի ուրիշը դասախոսում էին ահա ի՞նչ առարկաններից. Սուլրը Գիրք, հայերէն, տաճկերէն, Փրանսերէն, անգլիերէն, ալգերաց, երաժշտութիւն, ընդհանուր պատմութիւն, քաղաքական աշխարհագրութիւն՝ գլխաւորապէս Հիւսիսային Ամերիկա: Բայց ո՛քան ողորմելի էին աշակերտների պատասխանները. զարմանալի՛ խառնաշբիոթիւն ու քաօս էր տիրում նրանց գլխում և առհասարակ ողորմելի էր միսիօնարների այդ միջնակարգ ուսումնարանը Կարինում. նա մինչև անգամ ստոր էր ազգային վարժարանից. ահազին

փառահեղ շինութիւն, մեծ նիւթական միջոցներ և այդպիսի ոչընչութիւն... Ես մեծ կարծիք ունեի բողոքականների վարժարանների մասին և մանկական պարտէզը յայտնի չափով այդ արդարացնում էր, բայց բուն վարժարանները՝ թէ տղայոց և թէ աղջկանց՝ ո՛րքան ողորմելի էին: Այդ ուսումնարաններում իշխում է մի շատ անհամակելի ուղղութիւն—բողոքական աշակերտների մէջ զարգացնել ատելութիւն դէպի լուսաւորչականները, անտարբերութիւն դէպի ամենը, ինչ որ հայկական է և ձգտում դէպի անդիմականը, դէպի բողոքականների Քանանացոց երկիրը՝ Հիւսիսային Ամերիկան, որը սովորում են այդ բողոքական քրիստոնեանները, ինչպէս սովոր են իրանց անուաննել բողոքական-հայերը, համարել իրանց հայրենիք: Այդ մոլութիւնը այնքան խոր արմատ է ձգում բողոքական հայերի մէջ, որ օրէցօր աւելանում է ցանկացողների թիւը գաղթել Ամերիկա: և այս դէպքում տնտեսական նեղ ստիպողական դրութեան միանում է և կատարեալ սառնութիւն դէպի պատմական հայրենիքը:

Բողոքականների մէջ, ի հարկէ, կան այնպիսինները, մանաւանդ երիտասարդութիւնից, որոնք բողոքական լինելով հանդերձ չեն մոռանում իրանց հայ լինելը. բայց այդպիսիններին չեն սիրում բողոքական-քրիստոնեանները: Այդ գեղեցիկ սակաւաթիւ բացառութիւններից էր այս գալրոցի նախկին երիտասարդ ուսուցիչը՝ Աբրահամ Սեքլեմեանը, որ այժմ նստած է Կարինի բանտում: Նորա մեղքը ծիծաղելի էլ է պատմել. աշակերտներից մէկը՝ 16 տարեկան Սլմբատը՝ մի հայրենասիրական ոտանաւոր է ունենում գրած: Արձակուրդներին է թէ երբ, չեմ ցիշում, այդ տղան գնում է երգնկայ ծնողների մօտ: Ուստիկանութիւնը, ինչպէս վերջին ժամանակներս սովորական երևոյթ է դառել Թիւրքիայում, խուզարկում է պատմանութղթերը, որոնց մէջ գտնում է վերջիշեալ ոտանաւորը: Տղային կալանաւորում են ու հարցաքննում և իմանում, որ ոտանաւորը ուսուցիչը ուղղած է եղել: Խսկոյն հեռազերում են Կարին՝ կալանաւորել Սեքլեմեանին: Ուսուցիչը հասկացնում է, որ տղայի ոտանաւորին նա նշանակութիւն չի տւել, իբրև երեխայական մի խակ գրւածի, և ուղղել է միայն շը կոտրելու համար աշակերտի սիրտը: Այնքան հաւատացած է եղել Սեքլեմեանը իւր անմեղութեան մէջ, որ, թէև միջոց ունէր փախչել Տաճկաստանից. մինչև դատաստանի աակ

լնկնելը, բայց այնու ամենայնիւ մնացել էր, անհաւատալի համարելով, որ իրան մի այդպիսի չնշին գործի համար ծանր պատիժ համար, և սխալւեցաւ. մի քանի ամիս բանտարկութիւնից յետոյ տաճկական «արդար գառաստանը» վճռեց նորան «ուղարկել յաւիտենական աքսոր»: Իսկ 16 տարեկան Սմբատին շղթացակապ, իրբեզարհուրելի մի աւագակ կամ ծանր քաղաքական յանցաւոր, տարան քաղաքից քաղաք, մի վատառողջ բանտից միւսը, մինչև որ խեղճ՝ չը դիմանալով այլ ևս հիւանդացաւ և մեռաւ:

Ես տեղեկացայ վարժապետից, որ ժողովարանի գաւթումն էլ կայ մի ուսումնարան, ուր երեխանները պատրաստում են այս, աւելի բարձր, դասաստան համար: Նա դրեց աշակերտներից մէկին ինձ հետ, որ ցոյց տայ ճանապարհը:

Անցնելով ժողովարանի բակի զանազան ծակուծուկերով, հասանք մի սենեակ, որտեղ դիմաւորեց ինձ մի բողոքական հայ կին քանոնը ձեռքին. դա վարժուհին էր: Ազօտ լուսաւ որւած սենեակի պատերից մէկին կպած էր նոյնակս մի ինչ որ նախադասութիւն Սուրբ Գրքից և Հիւսացին Ամերիկացի քարտէզը: Երեք պատերին, յատակից կպած տախուակեաց նեղ թախուերի վերաց ծալապատիկ նստոտել էին աղջիկներ՝ ու տղաներ՝ իւրաքանչիւրը իւր տանից բերած շորի կտորը ձգած իւր տակ: Երեխանների համար իրըև սեղան իրանց ծունկերն էին ծառայում:

Ըսդհանուր պարապմունք ասածը չը կար. վարժուհին իւրաքանչիւրի հետ առանձին բան էր անցնում: Ամերիկացի միսիօնարներին շատ քիչ է հետաքրքրում ուսումնարանների յառաջդիմութիւնը կամ բարեկարգութիւնը. նոքա տեղացի հայ բողոքականներից դուրս եկած վարժապետաներին կամ վարժուհիներին են յանձնում ուսումնարանական բոլոր ծանրութիւնը, հարստահարելով նրանց աշխատութիւնը, իսկ իրանք, միսիօնարները, ստանալով ահազին ռոճնիկ և վարելով փարթամ կեանք՝ միայն ժամանակ առ ժամանակ Ամերիկայ, իրանց ընկերութեան, հասցնում են վիճակագրական տեղեկութիւններ, ուր ցոյց են տալիս՝ թէ ո՞րպիսի հսկայական քայլերով է յառաջ գնում Հայաստանում պրօպագանդան և լուսաւորութիւնը:

Սենեակում քառասունի չափ երեխաց կային 6—9 տարեկան: Այս-տեղ աւարտուած տղաները մտնում են բողոքականների մեր արդէն տեսած

դպրոցը, իսկ աղջիկները՝ աղջկանց ուսումնարանը, ուր կը գնանք հիմաւ Զարմանալի է, որ ունենալով այնպիսի ահագին փառահեղ, համարեա դատարկ շինութիւն, դասատունները առանձին առանձին տներում են, ցրւած:

Ժողովարանի գաւթից դրւրս եկայ իմ փոքրիկ ուղեցոյցիս հետ և խնդրեցի տանել բողոքականների աղջկանց ուսումնարանը, որ փողոցի հակառակ կողմում էր, մի երկարկանի շինութեան մէջ:

Դասատում զրած էին կանոնաւոր նստարաններ, պատին կացրած սուրբ նշանաբանը և Նիւսասային Ամերիկայի քարտէզը: Դասատան մէջ մօտ 12 մեծ մեծ աղջիկներ կացին: Սեղաններից մի քանիսը դատարկ էին, որովհետեւ աշակերտներից կէսի հետ միւս սենեակում երկու վարժուհիներից մինը հիմա անդլիերէն էր պարապում, իսկ ուր մենք մտանք՝ ալգերբայի դաս էր: Պատից կախած երկայն գրատախտակի առաջ կանգնած էին 6 օրիորդներ, աղքատ ու անկարգ հազնըւած, և բոլորն էլ միաժամանակ լուծում էին մի և նոյն ալգերբական խնդիրը: Վարժուհիների գիրքը ձեռքին թելադրում էր. աշակերտուհիներից մէկը խնդիրը լուծում էր բարձր ձայնով, միւսը գրումէր, կրիկն ջնջում, երրորդը աչքի տակից նայում էր իւր կողքին կանգնողի գրածի վերայ, իսկ միւսները ինչ որ խզբզում էին, մի խօսքով՝ կատարեալ քաօս էր և ոչ դասաւանդութիւն. մէկը վարժուհութելադրութեամբ լուծումէր խնդիրը, իսկ միւսները չը լուծած և չը հասկացած ջնջում էին իրանց գրածները. կրիկն նորն էր թելադրում և լուծում նոյն խառնաֆինթոր եղանակով: Իրանց տեղերում նստած աշակերտուհիներից մի քանիսը աշխարհագրութեամբ էին պարապում, միւսները բոլորովին այլ գործովի:

Ես զարմացած էի մնացել: Դասատունը մտաւ վարժուներից միւսը, բարեեց և սկսեց բարձր ձայնով ինձ հետ խօսել, թէև մի և նոյն ժամանակ նորա ընկերուհին անընդհատ շարունակումէր իւր ալգերբական հմտութիւնները ցոյց տալ:

Երկուսն էլ հայուհիք էին՝ Խարբերդի և Արարկերի միսիօնարական կոլեջներից:

—Ի՞նչ առարկաներ էք անցնում, հարցրի ես ինձ հետ խօսողից:

—Սուրբ Գիրք, անդլիերէն, տաճկերէն, հայերէն, գաղղիերէն, ալգերբա, երկրաչափութիւն...

— Իսկ հայոց պատմութիւն և Հայաստանի աշխարհագրութիւն:

Տեսնելով, որ դժւարանում է պատասխանել հարցիս՝ աւելացրի.

— Իսկ ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն անցնում էք:

Վարժուհին չէր հասկանում թէ ի՞նչ է նշանակում ընդհանուր պատմութիւն...»

— Այո՛, մի-մի կը կարդամ նրանց հետ գրքեր, ուր հռովմացոց մասին ալ բաներ կան...

Այդ վարժուհիները շատ ողորմելի էին իրանց զարգացմամբ և աշխարհայեցողութեան նեղութեամբ։ Կարելի էր խղճալ այն աղջկերանց, որոնց գլուխը մտցնում էին խառն ի խուռան ամեն բան, բայց ոչ այն գիտելիքները, որ հարկաւոր են նրանց կեանքի համար և ոչինչ զարգացում չէին տալիս։

Աշակերտուհիներից լուսաւորչականներ համարեա չը կային։ Առհասարակ միսիօնարները իրանց դպրոցներում միմիայն ստոր դասատներում և մանկական պարտէզներում են ընդունում մեծ պատրաստականութեամբ հայ լուսաւորչական երեխաններ, յուսալով նոցա մանուկ խելքերում ցանել իրանց սերմերը և այդպիսով կրօնափոխութեան պատրաստել։ — բայց աւելի բարձր դպրոցներում՝ կօլլէմներում՝ ընդունում են արդէն նրանց, որոնք ենթարկելում են կրօնական պրօպագանդացին։

Աշակերտուհիների թւում կար մի բողոքական ուսուահայ ծնողների աղջիկ, եջմիածնի պատերի տակ գոնուող Սամաղար հայ բողոքականների գիւղից... Կրօնափոխութիւնը մեր կրօնական կինդրոնի շրջակացքից է սկսել... Մինչդեռ մերայինք նիրհում էին տգիտութեան, ծուլութեան և անտարբերութեան մէջ, ամերիկացի միսիօնարները, սկսելով արդէն այս դարուս երեսնական թւականներից իրանց գործունէութիւնը Հայաստանի մէջ, կամաց կամաց բացին Հայաստանի զանազան կողմերում ժողովարաններ ու ուսումնարաններ և պատեցին անտէր երկիրը մի ամուր ցանցով։ Անզիական դեսպանները միշտ հովանաւորում էին նրանց, տաճկաց կառավարութիւնից արտօնութիւններ ձեռք բերում նրանց համար և նպաստում, որ հայ բողոքականները, անջատ-

և լով հայութիւնից, կազմեն մի առանձին քաղաքական մարմին, և յաջողեցին:

Թիւրքաց-Հայաստանում միսախօնարների գլխաւոր կենտրոններն են՝ Խարբերդ, Էրզրում, Վան, Իիթլիս, Արարկեր: Գլխաւոր ուսումնարանները, որնք պատրաստում են վարժապետներ, վարժուհիք և քարոզիչներ տեղացի բողոքական հայերից՝ դոնում են Խարբերդում և Արարկերում: Այնթափում միսախօնարները ունին մի բժշկական կոլեջ: Խնչքան և պահասութիւններ ունենան բյու վարժապետներ ու քարոզիչներ պատրաստող ուսումնարանները (կոլեջ), բայց էլի գոյութիւն ունին մեր մայր Երկրում, իսկ մենք այդ էլ չունինք:

Առհասարակ ամբողջ Փոքր-Ասիայում ցրւած են միսախօնարները և ունին այնպիսի հզօր միութիւն և կազմակերպութիւն, որ աւելի են նման տէրութեան, քան այն կառավարութիւնը, որինն է երկիրը: Միսախօնարները իրանց գերիշխող և անսմառչելի են պահում, և բողոքական հայ հասարակութեան վերայ նայում են իրեւ աւելի ստոր, հպատակ դասակարգի վերայ. Երբէք նրանք հայ բողոքականներին չեն տալիս մեծ պաշտօններ, երբէք իրանց որդոց չեն ուղարկում հայ բողոքականների համար բացած դպրոցները, որովհետև իրանք լաւ գիտեն թէ ի՞նչ խղճալի բաններ են այդ դպրոցները: Ստանալով ահազին գումարներ, նրանք քրիստոնեայ հայերի մէջ տարածում են քրիստոնէութիւն, չը համարձակելով նոյնը անել տաճիկների, քրդերի և յոյների մէջ: Փողով գրաւելով դէպի հաւատափոխութիւն՝ անբարոյականացնում են ժողովուրդը: Վաստաբանելով բեմից հայոց եկեղեցին իրանց հաւատացեալների աչքում, բաժանում են հարազատ եղբայրներին իրարից: «Ամերիկա» և «անդլիական լեզուն», փոխարինում է մատաղ սրտերում «Հայաստան», և «մայրենի լեզու» գաղափարներին:

Այն, ինչ անում է անդլիական հիւպատոսարանը բողոքականութեան նկատմամբ, նոյնը կատարում է Փրանսիականը կաթոլիկների համար: Եղուիտները դեռ XVII դարում մոել են Հայաստան, բայց միայն դարուս երեսնական թւականներին կաթոլիկական պրօպագանդան հասաւ իւր կատարեալ զարգացման և կաթոլիկ հայերը բաժաննեցին իրանց հայրենակից լուսա-

ւորչականներից քաղաքականապէս ու կազմեցին առանձին քաղաքական-կրօնական հասարակութիւն։ Այսպիսով փոքրաթիւ հայութեանը ծանկատանում երկու մեծ քաղաքական հարւածներ հասան։ մէկը՝ կաթոլիկների անջատումը հայ պատրիարքարանից, միւսը՝ բողոքական-ներինը։ Հայերը միշտ գուրկ են եղել քաղաքական տակտից ու հեռատեսութիւնից, և լուսաւորչական, կաթոլիկ ու բողոքական հայերի քաղաքականապէս անջատումը իրարից և բոլորովին ջոկ ջոկ հասարակութիւններ կազմելը՝ բազմաթիւ ապացոյցներից նորագոյնն է։ Կաթոլիկ հայը իրան «Փրանդ» է համարում, նրանսիան իրա հայրենիքն է երևակացում և լնդհանուր հայկական գաղափարներից բոլորովին իրան հետու է պահում։ Այդ է պատճառը, որ վերջին տարիները թիւրքաց կառավարութիւնը ամեն կերպ պաշտպանութիւն է ցոյց տալիս նրանց ի վեսա լուսաւորչական հայերին, որովհետեւ ֆրէրներին և հայ կաթոլիկ կղերին յաջողւել է համոզել տաճիկներին, թէ կաթոլիկութիւնը կը սպանի ազգայնութեան գաղափարը հայերի մէջ։

Խնձ չը յաջողւեց անձամբ տեսնել կաթոլիկաց դպրոցը Կարինում։ այդ պատճառով միայն կարող եմ հալորդել այն, ինչ իմացաց տեղն ու տեղը արած հարց ու փորձից։ Հայկաթոլիկների կամ «Ժիզվիթաց» դպրոցում սովորում են 125 աշակերտ, որոնցից 95-ը հայ-կաթոլիկ են, իսկ 24-ը հայ-լուսաւորչական, 4-ը յոյն և 2-ը տաճիկ։ Դպրոցի ուսման շրջանը 6 տարի է։ Ունի 7 ուսուցիչ, որոնց չորսը եզուիտ են, 2-ը հայ-կաթոլիկ վարդապետ և մէկը տաճիկ ։ Խոօջա։ Աւանդուում է հետևեալը՝ քրիստոնէական, ս. գիրք, աւետարան, սրբազն պատմութիւն, ծաղիկ սուրբ գրոց, հայերէն քերական, «զուարձալի ընթերցանութիւն մանկանց», «հեղարան—ընթերցարան», «հրահանդաւ աշխարհաբարէ գրաբար և գրաբարէ աշխարհաբար», զլուծմունք բառազննական, համաձայնական, քերականական և տրամաբանական, խօսելու վարժութիւն, «ձեւախօսութիւն», տօմարակալութիւն, ֆրանսերէն, տաճկերէն, թւաբանութիւն, ալգէրրա, պատմութիւն, աշխարհագրութիւն, գեղագրութիւն, դժագրութիւն և երգ։

Ուսումը ձրի է տրում։ միմիայն տարին մէկ անգամ վառելիքի համար փող են հաւաքում՝ ըստ կարողութեան։ Լինելով աւելի մատչելի և կանոնաւոր ազգային դպրոցներից՝ եզուիտների ուսում-

նարանը կամաց կամաց դրաւում է և լուսաւորչական ծնողների ուշադրութիւնը։ Նոր սերունդը, ինչպէս կաթօլիկ նոյնաբէս և բողոքական, դուրս գալով այդ եղութիւների կամ միսսիօնարների դպրոցներից, արդէն վարակւած է լինում՝ սակաւ բացառութեամբ՝ հայտութեամբ, անտարբերութեամբ դէպի հայկական խնդիրները և նեղ աղանդական աշխարհայեցողութեամբ։ Կաթօլիկների բունը Տաճկա-Հայաստանում Խոտորջուրն է, որ գտնւում է երզրումի սանջակի հիւմիս-արևմտեան մատում՝ Քիսդիմ Ղէզէում, Արդուինից ոչ այնքան հեռու։

Ես արդէն վերադարձել էի խանը և, նատած նորա երևելի ճաշարանում, վայելում էի ախալցիսացի խոհարարի զղբթմանս, երբ սանդուղքների վերաց լսեց աղմուկ, ծիծաղ և ուրախ բացականչութիւններ ու մի քանի բոպէից յետոյ ճաշարանը մոտաւ նոր-նախիջեանու բարբառով խօսող մի տղամարդ։ Դա այն ուխտաւորն էր, որ իմ գալուց մի քանի օր առաջ անցել էր ս. Կարապետ։ Ուխտաւորը մօտ 50 տարեկան նիհար մարդ էր, մեծ քթով, սև հաստ բեխներով և թրաշած դէմքով։ Հագին ունէր մուշտակ և երկար կօշիկներ, գլխին մորթէ գլխարկ։ Նա Տրապիզոնով եկել էր և նոյն ճանապարհով պիտի յետ դառնար։ Այդ նոր-նախիջեանցին մեծ կալւածատէր էր ու անասնապահ։ որդի չ'ունէր և եկել էր, որ ս. Կարապետը նորան օգնի։ Այդ ուրախ պարզ մարդը ճանապարհորդում էր բոլոր պատրաստութիւններով։ Հետը վերցրել էր մեծ պաշար՝ խաւիար, պանիր, թէյ, շաքար, թէյաման և այլն։ Նա չափից դուրս ուրախ էր, որ անվտանգ վերադարձաւ կրկին երզրում և գովում էր իւր հմուտ զավուզին (տառշնորհ), որը մի չափահաս, առնական դէմքով հաց-լազ էր։ Հին մեծ մեծ ատրճանակները ցցած իւր լայն գոտիում և կողքից կախած երկայն կեռ թուրը։

—Հաձէ, ախապարս, եցածիլմ, չօխտան պրօքալատալսա, զաքուսկա, վօթքա, փաղավայ։ սապահթան բան չեմ կերէ, չօրտ վազմի տակօյ խօլօդ, դիմում էր նա ուրախ ճայնով հիւրանցատիրոջ և խոհարարապետին։ Նա չէր ուզում լնդունել թէ ոուսաց բառերը, որ նորա նախադատութիւնների մեծ մասն էին կազմում, Տաճկաստանում չեն հասկանել։

Նոր-նախիջեանցին մի քանի օր մնաց երզրումում հանգստանա-

լու, որ կրկին ճանապարհ ընկնի Տրապիզոնվ իւր տուն։ Այդ հասարակ, բարեպաշտ մարդը սաստիկ խաբւած էր համարում իւր կարծիքի մէջ վանականների մասին։ Ս. Կարապետի վանքը, չը նայած որ մեծ կալւածներ ունի, երկու գիւղ, կրպակներ ու աներ զանազան տեղերում, չը նայած նւիրատութիւններին և այն եկամուտներին, որ ստանում է ուխտաւորներին ծախած մատաղացուներից և մոմից, այնու ամենայնիւ մի աւերակ է ճեղքւած գմբէթով, թեքւած խաչով, ուխտաւորներին յատկացրած զգւելի նկուղներով։ Բացի այդ դեռ պարտքի տակ էլ է... նւիրատութիւններ ստանում են ժողովրդից և կալւածներ ունին մեր վանքերը, բայց... պարդապետք տիսմարք... ոսկեսէրք, նախանձուք... գալ եղեալ՝ զիւրեանց հօտս գիշատելով...»

Եւ ինչ է արել թիւրքահայոց ազգացին վարչութեան կենտրոնը՝ Պօլիսը՝ Թիւրքա-Հայաստանի համար, թէ հոգեւորականներ պատրաստելում և թէ վանքերի ու եկեղեցիների դրութիւնը կանոնաւորելում, որ հիմա ինչ պահանջենք Թիւրքա-Հայաստանի քահանաներից կամ վանականներից։ Պօլիսը, ճիշդէ, անընդունակ է ու տհաս մասամբ, ու րովհետեւ գտնում է այնպիսի երկրում, ուր ճշմարիտ կարգ ու կանոն, գիտութիւն ու լուսաւորութիւն ասածները մուտք չեն կարող ունենալ. մինչեւ որ նոյն քաղաքական—հասարակական դրութիւնը տեսի, մինչեւ որ չը հեռացնեմ գլխաւոր արգելքը, որ ամուր կաշկանդիկ է թիւրքահայոց կեանքի բոլոր կողմերը՝ անկարելի է յառաջադիմութիւն սպասել։ Այդ հասկացել էր մի մեծ, այժմ պատմական անձնաւորութիւն, որի թզուկ յաջորդների նեղ, խաւար աբեղայական մտքերին անըմբունելի են նախորդի լայն ծրագիրը. այդ յաջորդները չունին նախորդի դիւրազգաց ցաւող սիրտը, որ արիւն-արտասուք թափէին տեսնելով ու լսելով իրանց չարատանջ ժողովրդի թշւառութիւնը ու տառապանքը և պաշտպան հանդիսանացին ընկած-վիրաւորւածին...»

Բարեպաշտ ուխտաւորը այնքան հիասթափւած էր և վատ կարծիք կազմած ս. Կարապետի հայրերի մասին, նրանց տգիտութիւնը և շահասիրութիւնը տեսնելով, որ երդում էր թէ երբէք չի վստահանալ այսուհետեւ որ և է մեծ նւիրատութիւն անել այդ վանքի օգտին։ Նա ցոյց էր տալիս մի քանի թանկագին քարեր, որ վանականները առհասարակ սովորութիւն ունին անիմնայ պոկել հնա-

գարեան զգեստներից ու խաչերից և վաճառել ու խտաւորներին, հնի տեղը դնելով գոյնզգոյն ապակիների կտորներ: Վանքը ունի մատաղացուներ ու խտաւորներին վաճառելու վանքի օգտին, սակայն այդ աղբիւրը վանականների գրպանի սեպհականութիւն է. Էլ շեմ ասում կալւածների և պտղի անուանած տուրքի մասին: Եւ մի վանք, ունենալով այդ նիւթական աղբիւրները, գեռ պարտքեր ունի, ոչինչ արած լինելով ոչ միայն շրջապատող գիւղացիների որդոց կրթութեան համար, այլ նոյն իսկ ու խտաւորների յարմարութեան: Խնչպէս որ հարստանալու կամ ապրուստ ճարելու համար մարդիկ ընտրում են մի որ և է դործ՝ օրինակ, վաճառականութիւն կամ արհեստ նոյնպէս են նայում և մեր վանականները իրանց ընտրած ասպարէզի վերաց. վանքի եկամուտներից ով ինչքան կարող է օգտուում է: Սիամութիւն կը լինէր մոտածել անգամ, որ մեր վանականներից մեծ մասը աշխարհային հոգսերից հեռանալու և աստուածպաշտութեան կամ ազգին ծառացելու նպատակով լինէին մտնում վանքերը. սեպհականութիւն ունենալու մէրը նրանց մէջ մինչեւ անգամ ամելի է զարդացած քան մեր աշխարհականների մէջ, և յաճախ է պատահում նրանց մահից յետոյ գտնել մի որ և է տեղ պահած կամ մարմնի վերաց կապած մի քանի հազար ոսկիներ: Եւ ինչ բարողական ու մտաւոր դարձացում ունին խեղճերը, որ դաղափարական հրապոյրներ ու ձգոտումներ ունենան կեանքում...

\* \* \*

Թիւրքաց տեղական վարչութեան վեհերոս կասկածուութիւնը օրէց օր սաստկանում էր և անտանելի գառնում ոչ միայն իմ, այլ և այն փոքրաթիւ անձանց համար, որոնց հարկ էր լինում ինձ հետ տեսնել կամ խօսել: Կասկածանքի բարդելու պատճառը նախ յայտնի Պօղոս Սարավեանի մատնութիւնն էր, թէ «այդ ոռոսահայր անձանօթ վարժապետ մըն է, կասկածաւոր մէկն երևցեր է, անոր համար Սանասարեանք իրանց դպրոցը չեն ընդուներ. հսկեցէք թէ որոնց հետ կը տեսնեի». իսկ երկրորդ՝ տաճիկների սեպհական կասկածանքը, թէ «իցէ» դա հայոց շարժման մի պլրօպադանդիստ է», բայց առաւել, որ «դա ոռոս գեներալ-փաշա է, որ ծպտեալ շրջում է մեր երկրում ո.ազ-

մագիստական նպատակով։ Եւ քաղաքագետ Մուրադ էֆենդին արդէն նախագծել էր իմ ապագայ մարշրուտը այսպէս։ «այդ զօրապետը երզրումից կը գնայ Մուշ կամ, եթէ այդպէս չը յաջողւի, նախ Տրապիզոն, յետոյ Ստամբուլ, Ռումելիա, Եգիպտոս, յետոյ կ'անցնի Մուշի և Տիգրանակերտի ու Վանի կողմերով ու Պարսկաստանով Ռուսիա։ Թէ ես «ծագտեալ ռազմագէտ» եմ, բոլիսները աւելի համոզեցին, երբ ռուսաց հիւստատոսը ինձ սիրալիք ընդուներութիւն ցոյց տուեց մեկնելու օրիցս մի քանի օր առաջ։

Այդ է պատճառը, որ բոլոր ժամանակը բօլիսները իրանց գրպանի «ժուրնալներում» մեծ ճշգութեամբ արձանագրում էին իմ մասին բոլոր տեղեկութիւնները—ե՞րբ ո՞ւր գնացի, ո՞ւմ տեսայ, ո՞ւմ հետինչ խօսեցի և այլն։ Ով որ չը նայած այդ բոլորին համարձակուում էր ինձ հետ խօսել, ենթարկուում էր նկատողութեան և սպառնալիքի։ Այլպէս, մի պարակահպատակ երիտասարդ, որ վարժապետութիւն էր անում Կարինի ազգացին դպրոցում, փորձեց ընթերցարանում մի երկու անդամ խօսել հետո։ Առաջի անդամ Ալին ուղարկեց մի հայերէն գիտցող տաճիկ, որ գայ մեր կողքին նատի և լսի մեր խօսակցութիւնը. իսկ երկրորդ անդամ ինքը ընդմիջեց մեր խօսակցութիւնը, կանչելով երիտասարդին իւր մօտ և յանդիմանելով, թէ ինչո՞ւ է խօսում այդ «միւզիրա»-ի հետ։ մի՞թէ չը գիտէ, որ կառավարութեան աշխատամասացը մի շատ վտանգաւոր մարդ է. այդ անզգուշութեան պատճառով հիմա ինքը երիտասարդը, թող յայտնի լինի իրան, կասկածանքի տակ է և կը կանչի սարացը հարցաքննելու։

Խեղճը այլայլած աշխատում էր համոզել, թէ մեր խօսակցութեան մէջ ոչինչ կասկածելի բան չը կար և թէ խօսում էինք բիլիարդի մասին։ Բայց դժւար էր համոզել «բօլիսներին», որոնք բաւական չէ որ դրսում ինձ վերայ հակում էին, այլ և ժամանակ առժամանակ յանկարծակի մտնում էին կամ իրանք կամ իրանց ուղարկած մարդիկ սենեակա, որպէս զի տեսնեն ինչ եմ անում և ո՞վ կայ մօտս։ Այնպէս որ ես հարկադրւած էի յետոյ՝ ազատելու համար ինձ այդ անկու այցելուներից՝ փակւել ներսից։

Կասկածանքը մինչև անդամ ընկնում էր հիւրանոցատիրոջ վերայ, որը ի հարկէ ստիպմամբ պէտք է որ և է յարաբերութիւն ունենար իւր «միսաջիրի» հետ։ բայց խեղճին մի

կողմից բօլիսներն էին զգուշացնում, իսկ միւս կողմից իւր ընկերները, որոնք մաս ունեին հիւրանոցի շահերում: Այդ աղաները անբաւական էին ու տրտնջում հիւրանոցատիրոջ վերայ, որ մի կասկածաւոր մարդու ապաստարան տևեց իւր «հօթելում» և այդպիսով իրանց վերայ էլ դարձրեց կառավարութեան կասկածանքը: Բաշ-բօլիսը սպառնացել էր նրանց ասելով. «Հանդիսա կացէ՛ք, թէ ոչ նէնդազի աքսոր կերթաք»: Ըսկերները մինչև անդամ հարց էին բարձրացրել բաժանել, եթէ ես շարունակեմ մնալ «հօթելում»:

Իմ անունով եկած հեռագրի բովանդակութիւնը և իմ պատասխանս հասցրել էին վալիին: Ես ոչ մի նամակ չը տուացաչ, թէ մի քանի թառութիւն (տղակոված) նամակներ էին ինձ գրել: Դիցուք ինձանից յետոց կարող էին տուացւած լինել, բայց միթէ պօտի պարտականութիւնն չէր վերաղարձնել ուղարկողներին, երբ տուացողը այլ ես տեղումը չի:

Սանասարեանց և պօլիցիայի այդ բոլոր վարմունքից յետոյ զարմանալի չէր, որ Կարինում ոչ մի հայ երկիւղից չէր համարձակուում ինձ հետ տեսնել կամ խօսել, իսկ եթէ ծանօթէ, զլուս տալ անդամն «մուսահայի» ամեն քայլը նրանց բոլորին հետաքրքրում էր, բայց իւրաքանչիւրը լաւ գիտէր թէ որքան կը վնասակ կառավարութիւնից, եթէ որ և է յարաբերութիւն ունենայ հետը:

Եթէ ես երզրումից Մուշ ուղևորւէի, նոյն երկիւղը կը լինէր այն գիւղացիների համար, որոնց մօտ ես պէտք է իջնանէի: Անցեալ տարի, երբ Կարինի ուռւսաց հիւպատոս Դինետը կատարում էր իւր տովորական պտոյտը երզրումի վիլայէթի զանազան կողմերում, բազմաթիւ հայ գիւղացիք տաճկաց կառավարութիւնից կալանաւորւեցին և խստիւ հարցաքննեցան, որովհետեւ, իբր թէ հիւպատոսին տեսնելով ասել էին. ուհա՛ մեր երկրի տէրը»:

Մինչև երզրում համնելս տեղական վարչութիւնը ի հարկէ ոչինչ կասկածանք չէր կարող ունենալ վերաս, որովհետեւ չը գիտէր էլ իմ մասին, բայց երզրումում ընդունելով ինձ, իբրև մի շատ վտանգաւոր մարդ, այնուհետեւ նա հիւսամուտ էր իմ ամեն քայլափոխին: Գուցէ եթէ բօլիսների սխալը չը լինէր որ ես «ծագտեալ գեներալ» եմ, պէտք է առանց այլեալլութեան ինձ խուզարկէին ու բանտարկէին, ինչպէս արել էին անցեալ տարի պ. Կ. Փ.-ին, որին

շղթայակապ ուղարկել էին երզրումից Վան, ուր բանտից ազատվել էր միմիայն ոռուսաց հիւպատոսարանի ծառայող Ն. բէզի բոնի ուժով և աղառնալիքով:

Այն ինչ որ փորձեցի, տեսայ ու լսեցի երզրումում, և մի քանի այլ հանդամանքներ, տոխացեցին ինձ մտածել՝ կարճացնել իմ այցելութիւնս Թիւրքաց-Հայաստանին և վերադառնալ Կովկաս, թէև մի յարմար առիթ պատահեց երզրումից Վան գնալու։ Այդ առիթը ներկայացնում էին Կարինի բանտում իրեւ քաղաքական յանցաւորներ բանտարկւած 4 վանեցիներ։ Հայրը իւր երեք որդոց հետ, որոնցից մեծը մօտ 22 տարեկան մի երիտասարդ՝ Պօլսից Կարին հասած ժամանակ խուզարկւում է և երբ նորա նամակների մէջ գտնուում է հայրենասիրական մի ոտանաւոր, կալանաւորւում է ու բանտ գցւում, բայց որովհետեւ նամակագրութիւն է ունեցած լինումիւր հօր և կրտսեր եղբայրների հետ, այդ պատճառով տաճկաց տեղական վարչութիւնը կասկածելով մի՞ գուցէ նրանք էլ ոտանաւորի ոգուն համակրում լինին՝ իսկոյն հեռագրում է Վան և երեքին էլ բերում են ձգում իրանց հարազատի մօտ։ Ամիսներով տեսում է քննութիւնը։ Մի պօլսեցի հայ փատաբան էֆէնդի կարողանում է անմեղ հօր և երկու պատանիներին արդարացնել, իսկ ոտանաւորի դժբաղդ հեղինակը դատապարտում է օյաւիտենական աքսորի։

Ես տեսայ հօրը և երկու պատանիներին, որոնք նոր էին բանտից դուրս եկել և իմ համարիս կից սենեակում էին ապրում։ Ողորմելի՛ է այն վարչութիւնը, որ այդպիսի խեղճ, թրքաւէր անգամ, մի վաճառականից և դեռ երեխայ ու բոլորովին անզարգացած պատանիներից երկնչում է։

Ահա, բանտից այդ ազատւածներն էին, որ պատրաստում էին «կաթրչիների» ձիերով վերադառնալ Վան՝ իրանց կարօտեալ և սպառը ընտանիքի մօտ։ Նրանք պէտք է գնացին ձմերացին ճանապարհով, այսինքն՝ պէտք է էրզրումից գնացին Հասան-Ղալա և այնտեղից Ալաշկերտ, Արճէշ և յետոյ Վանի ծովի ափով համնէին Վան, 15 օրւայ մէջ։ Հաղորդակցութեան նախաջրհեղեղացին դրութիւն...

Յիշելով սահմանագլխին Վանի ոռուսաց փոխ-հիւպատոսի վարմունքը ինձ հետ և խօսքերի, բացի այդ գիտենալով, որ Վանում առաւել ևս մէծ է թիւրքերի կասկածանքը և աւելի զարգացած

մատնութիւն ու լրտեսութիւնը՝ ես չը փոխեցի իմ վճիռս՝ վերադառնալ կովկաս:

Նոյեմբերի 18-ն էր, երբ ես գնացի հիւպատոսարանը անցաթուղթս նշանակել տալու և խնդրելու, որ վերցնեն նաև թիւրքաց վարչութիւնից անցաթուղթ, ինչպէս ուսհանջում էր տաճկաց վարչութեան նորագոյն կարգադրութիւնը:

Հիւպատոսարանում ինձ յացնեցին, որ գեներալ-կօնսուլլ ցանկացել է ինձ տեսնել և խնդրել է իւր մօտ:

Ալէքսէյ Բօմանովի՛չ Դենետը իւր շքեղ բնակարանում ընդունեց ինձ ամենասիրալիր կերպով նաև ուրախ եղաւ մանաւ. անդ երբ իմացաւ, որ նոյն համալսարանից և նոյն բաժանմունքից եմ, որտեղ և ինքն էր աւարտել 30 տարի առաջ: Մեծ հետաքրքրութեամբ հարցնում էր նոր պրօֆեսսօրների և առհասարակ alma mater-ի և բնական դիտութիւնների նորագոյն դրականութեան մասին:

Ալէքսէյ Բօմանովի՛չը յացնեց իւր ափսոսանքը, որ ես նախ քան իրագործել իմ դիտաւորութիւնս չէի զիմել իրան նամակով ու տեղեկացել Տաճկաստանի ներկայ հանդամանքների մասին: Նա յայտնեց, որ ինքը միմիայն այն ժամանակ կարող էր պաշտօնապէս ինձ աջակցութիւն ցոյց տալ, եթէ ես ուղարկւած լինէի ուռասց որ և է դիտնական ընկերութիւնից սակայն այն էլ չէր ծածկում, որ այն ժամանակ գուցէ ևս առաւել մեծ լինէր իմ վերաց տաճկաց հսկողութիւնը: Նա ցոյց տեց, ի միջն այլոց, մի հեռագիր ուռաս-տաճկական սահմանագլխից՝ Յլժ-ւայ կողմերից՝ որ խփել էր տաճիկներից բանտարկւած մի ուռահայ: Ի վերջոց շատ ափսոսաց, որ ես այնքան ժամանակ լինելով էրզրումում, չէի գնացել նորա մօտ և խնդրեց կիւրակի օր իւր մօտ ճաշի:

Գեներալ-կօնսուլլ ինձ արած ընդունելութիւնը առաւել ևս հաստատեց էրզրումի վարչութեան կասկածանքները իմ մասին և նա կրկնապատճեց իմ վերաց եղած հսկողութիւնը: Բօլիմները արդէն գիտէին, որ կիւրակի օր, նոյեմբերի 20-ին, ես հրաւիրւած եմ ճաշի, իսկ 21-ին որոշած եմ ճանապարհ ընկնել էրզրումից:

Թէև Կարինից Տրապիզոն խճային ճանապարհ կայ, բայց պօստային հաղորդակցութիւն կայարաններով, ձիերով և այն՝ բնաւ: Ամառը կարելի է ճանապարհորդել կամ ֆուրդոնով կամ կառքով: Բայց ամբողջ Կարինում, ինչպէս տեսանք, մի կոտրւած կառք

կար վարձով տրւող, այն էլ մի շաբաթ առաջ տարել էր նոր-նա-  
խջևանցի ուխտաւորը: Մինչև անգամ եթէ զսնւէր կառք, հիմա  
երկիւղալի էր անիւային հաղորդակցութիւնը այդ նանապարհներով, որ  
ծածկւած էին արդէն ձիւնի թանձր խաւով: Մնում էին սովորական մի-  
ջոցները՝ կաթրչիները և ուղուերի քարաւանները:

Նս ինդրեցի Յովհաննէս աղայից վարձել ինձ համար մի կաթրչի  
երկու ձիով, որովհետև իմ ձիս կարին հասնելուն պէս վաճառել էի,  
միմիայն պահելով մօտս թամբը, առաջուց գիտենալով, որ այլապէս  
պէտք է անտանելի սեմարներին (բարձր փալան) վերայ ցցւեմ:

Հաջի-Ղազարը բերաւ լազստանցի մի երիտասարդ ու քաջա-  
ռողջ հայ կաթրչի, որ  $1\frac{3}{4}$  ոսկով (մօտ 17 րուբլի) խոստանում էր  
ինձ հասցնել 8 օրում Տրապիզոն: Երկուշաբթի նոյեմբերի 21-ին  
առաւոտը պէտք է ճանապարհ ընկնէի, իսկ նախորդ օրը հրաւիրւած  
էի հիւպատոսի մօտ ճաշի:

Այդ օրը առաւոտեան ես գնացի Կարնոց հայոց միակ եկեղեցին:  
Քօլիսներից մինը եկաւ և գաւթում սպասեց մինչև իմ դուրս գալու

Ահազին եկեղեցին լիքն էր աղօժողներով, որն ք ֆէսերը գլխներին,  
ծալապատիկ նստոտած՝ իւրաքանչիւրը իւր մի կտոր շորի վերայ և կող-  
քին դրած հողաթափները՝ բարձր յօրանջում էին և աղօթքից խօսքեր  
արտասանում: Եկեղեցու յետեւի մասում խիտ վանդակապատի ետե-  
ւից, ինչպէս գազանանոցի վանդակներում բանտարկած գազան-  
ներ, կանգնած էին «էհրամների» (բրդեայ բարակ ծածկոց) մէջ  
փաթաթւած կարնոց հայ կանայք:

Եկեղեցու դռներից մինչև փողոցի գարբասները շարւած էին մի  
շարք աղքատներ, գլխաւորապէս թիւրքեր: Նս բաժանեցի մօտս ե-  
ղած զուրուշները և լսեցի նրանց օրհնանքը. երկեւ այդ թիւրք  
աղքատները միակ մարդիկն էին Կարինում, որ ցանկանում էին իմ  
մնալս Կարինում...

Նշանակած ժամին գնացի հիւպատոսի մօտ. քօլիսները մեծ  
ուշադրութեամբ զիտում էին թէ ով բացի ինձնից պէտք է հրաւիր-  
ւած լինի ճաշին. տարաբաղդաբար, բացի հիւպատոսից և իւր պա-  
տանի մի ազգականից աւելի ոչ ոք չը կար:

Ճաշի ժամանակ հիւպատոսը, ի միջի այլոց, սարսափելի բաներ  
էր պատմում այն ճանապարհի մասին, որով ես պէտք է անցնէի:

Երեկոյեաները վերադարձաց սենեակս, մի քանի ժամանակից յետոյ լսեցի հիւրանոցի փակած դրան առջև աղմուկ, կոխւ. մէկը ուզում էր մտնել հիւրանոցը, իսկ դրան մօտ հսկող բօլիսները լնդդիմանում էին նորան: Աերջ ի վերջոց մի քանի «պինդ» խօսքերից յետոյ մտաւ հիւրանոցը ուսւաց հիւպատոսարանի կաւասը և յանձնեց ինձ անցաթուղթս և երգումի տաճկական պօլիցիայից առացած «թեսքերէն»:

Ամեն բան կապկապելուց յետոյ և կաթրչուս պատկրելով ժամանակին արթնացնել ինձ, ես պառկեցի և անցկացրի վերջին գիշերը կարինում:

(Կը շարունակուի)